ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 11.08.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/26

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից 01.08.2017թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/26 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Լոկատոր» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Լոկատոր» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 01.08.2017թ. բողոքով հայտնել է, որ Արագածոտնի մարզպետարանի կարիքների համար հակակարկտային կայանների տեղակայումով ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ-ԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-01/17» ծածկագրով ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի 24.03.2017թ. թիվ 3 որոշմամբ հայտարարվել է հրավեր:

Ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել «Բարվա» ՍՊԸ-ն և «Լոկատոր» ՓԲԸ-ն:

Ընկերությունը ներկայացրել է գնային առաջարկ՝ 6 270 000 ՀՀ դրամի չափով, իսկ «Բարվա» ՍՊԸ-ն՝ 6 300 000 ՀՀ դրամի չափով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.04.2017թ. թիվ 2 արձանագրությամբ առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Լոկատոր» ՓԲԸ-ն, որին առաջարկվել է եռօրյա ժամկետում ներկայացնել հրավերով և հայտով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընկերությունը սահմանված ժամկետում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 10.04.2017թ. թիվ 3 արձանագրությամբ երկարաձգել է հայտերի գնահատման նիստը՝ մինչև Ընկերությունից ու ՀՀ ֆինանսների նախարարությունից պարզաբանում ստանալու հաջորդ օրը:

Ընկերությունը 13.04.2017թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացրել պարզաբանում, որի համաձայն՝ *«Ի պատասխան Ձեր կողմից 12.04.2017թ. գրությանն ուղղված «Լոկատոր» ՓԲ ընկերությանը՝ նախ հայտնում ենք հետևյալը՝ թիվ «ՀՀԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-16/02» ծածկագրով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի բողոքարկման խորհուրդը ԳԲԽ-104/16 որոշմամբ ոչ թե անվավեր է ճանաչել պայմանագիրը, այլ ապօրինի է ճանաչել մրցույթը, իսկ պայմանագիրն անվավեր ճանաչելու լիազորություն բողոքարկման խորհուրդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն չունի և չի կարող այն անվավեր ճանաչել: Պայմանագիրն անվավեր ճանաչելու իրավասություն ունի միայն դատարանը: Այն ժամանակ, երբ բողոքարկման խորհուրդը ԳԲԽ-104/16 որոշմամբ ապօրինի է ճանաչել մրցույթը, արդեն իսկ պայմանագիրը կնքված է եղել և մրցույթի հաղթող ճանաչված «Լոկատոր» ՓԲ ընկերության կողմից տեղադրվել են հակակարկտային կայանները և կազմվել է համապատասխան հանձնման-ընդունման ակտը և դուրս է գրվել հարկային հաշիվ, այսինքն բողոքարկման խորհրդի որոշումն այդ պահին ժամանակավրեպ էր և առարկայազուրկ և ենթակա չէր կատարման և որևէ իրավաբանական ուժ չէր կարող ունենալ «Լոկատոր» ՓԲ ընկերության համար: Մրցույթն ապօրինի ճանաչելուց հետո*

շահագրգիռ անձը պետք է դիմեր դատարան և պահանջեր անվավեր ճանաչել կնքված պայմանագիրը, նոր որից հետո, եթե դատարանը գտներ, որ պայմանագիրն անվավեր է և այդ վճիռն օրինական ուժի մեջ մտներ, այդ պայմանագիրը կհամարվեր անվավեր և այլևս իրավաբանական ուժ չէր ունենա և ձեր պահանջը կլիներ ճիշտ և հիմնավոր:

Տվյալ դեպքում, վերը նշվածը հաշվի առնելով, պայմանագիրն անվավեր ճանաչված լինելու մասին խոսք անգամ չի կարող լինել, և այն պայմանագիրը, որը ներկայացվել է հանձնաժողովին ապացույց է այն մասին, որ «Լոկատոր» ՓԲ ընկերությունն այդ պայմանագրով իրականացրել է հրավերով պահանջվող հակակարկտային կայանի մատակարարում՝ տեղակայումով, և որ այդ պայմանագիրն երբևիցե անվավեր չի ճանաչվել»:

«Բարվա» ՍՊԸ-ի կողմից 24.05.2017թ. գնումների բողոքարկման խորհուրդ է ներկայացվել բողոք, որից հետո դիմել է խորհրդին բողոքը թողնել առանց քննության:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 09.06.2017թ. թիվ 4 արձանագրությամբ «Լոկատոր» ՓԲԸ-ին ճանաչել է մրցույթի ընտրված մասնակից, առաջարկել է կնքել պայմանագիր, որից հետո Ընկերությունը ստորագրել և կնքել է պայմանագիրը և ուղարկել է պատվիրատուին:

Այնուհետև՝ 13.06.2017թ. «Բարվա» ՍՊԸ-ն կրկին բողոք է ներկայացրել գնումների բողոքարկման խորհուրդ, պահանջելով՝ դադարեցնել «ՀՀ-ԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-01/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.06.2017թ. կայացրած՝ Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու, պայմանագիր կնքելու մասին որոշումը և «Բարվա» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից կամ չեղյալ հայտարարել թիվ «ՀՀ-ԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-01/17» ծածկագրով ընթացակարգը:

Գնումների բողոքարկման խորհուրդը 13.07.2017թ. «Բարվա» ՍՊԸ-ի բողոքը բավարարել է մասնակի՝ դադարեցնելով «ՀՀ-ԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-01/17» ծածկագրով արտակարգ կամ անկանխատեսելի այլ իրավիճակի առաջացման հիմքով գնումների հայտարարությունը նախապես հայտարարելու միջոցով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.06.2017թ. թիվ 4 արձանագրությամբ «Լոկատոր» ՓԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու, ինչպես նաև պայմանագիր կնքելու մասին որոշումները,

հիմքում դնելով այն, որ հանձնաժողովը Ընկերությանը չի առաջարկել սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Որից հետո «ՀՀ-ԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-01/17» ծածկագրով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովն առանց Ընկերությանը ծանուցելու, լրացուցիչ փաստաթղթեր պահանջելու, առանց որևէ արձանագրություն Ընկերությանն ուղարկելու, որոշել է ընտրված մասնակից ճանաչել «Բարվա» ՍՊԸ-ին և կնքել վերջինիս հետ պայմանագիր:

Ընկերությունը գտնում է, որ սույն բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «ՀՀ-ԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-01/17» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով գնումների բողոքարկման խորհրդի 13.07.2017թ. որոշումը և դադարեցնելով «ՀՀ-ԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-01/17» ծածկագրով արտակարգ կամ անկանխատեսելի այլ իրավիճակի առաջացման հիմքով գնումների հայտարարությունը նախապես հայտարարելու միջոցով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.06.2017թ. թիվ 4 արձանագրությամբ «Լոկատոր» ՓԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու, ինչպես նաև պայմանագիր կնքելու մասին որոշումները, չէր կարող առանց Ընկերության մասնակցության, առանց Ընկերությանն իր կողմից կայացված արձանագրությունները ծանուցելու կամ հրապարակելու, և ի վերջո առանց Ընկերությանն առաջարկություն ներկայացնելու, որպեսզի Ընկերությունը վերացնի այն թերությունները, որոնք իբր թե արձանագրվել են գնումների բողոքարկման խորհրդի կողմից, կայացնելու որոշում՝ «Բարվա» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու, ինչպես նաև պայմանագիր կնքելու մասին:

2. «ՀՀ-ԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-01/17» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է և պարտավոր էր հիմք ընդունելով գնումների բողոքարկման խորհրդի որոշումը, առաջարկել Ընկերությանը շտկել արձանագրված անհամապատասխանությունները, որից հետո, եթե Ընկերությունը չշտկեր այդ անհամապատասխանությունները, հանձնաժողովը կարող էր կայացնել որոշում «Բարվա» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին:

Ընկերությունը գտնում է, որ «ՀՀ-ԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-01/17» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումը՝ «Բարվա» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու

և պայմանագիր կնքելու մասին, կայացվել է օրենքի խախտմամբ, այդ որոշմամբ խախտվել են Ընկերության՝ ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված իրավունքները և օրինական շահերը, հետևյալ պատճառաբանությամբ.

Մինչև 25.04.2017թ. խմբագրությամբ գործող «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այն, որ Ընկերության կողմից ներկայացված հայտն եղել է բավարար, դա արձանագրվել է նաև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից: Ընկերությունը հետագայում չի ստացել որևէ արձանագրություն, այն մասին, որ Ընկերության հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

Ընկերությունը, ստանալով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրությունը, ներկայացրել է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք պահանջվել են թե հրավերով և թե օրենքով:

Որից հետո, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն Ընկերությանը ներկայացրել է գրություն միայն այն անհամապատասխանության մասին, որ Ընկերության կողմից ներկայացված նախկինում նմանատիպ աշխատանքի կատարման պայմանագիրը գնումների բողոքարկման խորհրդի կողմից ճանաչվել է անվավեր:

Ընկերությունը սահմանված ժամկետում գրավոր հանձնաժողովին է ներկայացրել հիմնավորում-պարզաբանում:

Այնուհետև՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն այդ հարցի հետ կապված պարզաբանում է պահանջել նաև ՀՀ ֆինանսների նախարարությունից: Ստանալով նաև ՀՀ ֆինանսների նախարարության պարզաբանումը, Ընթացակարգի գնահատող

հանձնաժողովն Ընկերության կողմից ներկայացված հայտը ճանաչել է բավարար և առաջարկել կնքել պայմանագիր:

Ինչպես նշվել է վերևում, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը բացի այդ անհամապատասխանությունից, այլ անհամապատասխանություն չի արձանագրել և Ընկերությանը չի առաջարկել շտկել որևէ այլ անհամապատասխանություն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 51-րդ կետի համաձայն, պարտավոր էր Ընկերությանը ներկայացնել գրություն և առաջարկել շտկելու այն անհամապատասխանությունը, որը արձանագրվել է գնումների բողոքարկման խորհրդի կողմից: Որից հետո, եթե Ընկերությունը Կարգի 52-րդ կետով սահմանված ժամկետում չշտկեր այդ արձանագրված անհամապատասխանությունը, դրանից հետո միայն պետք է մերժեր Ընկերության հայտը և փաստաթղթերը ներկայացնելու պահանջ ներկայացներ «Բարվա» ՍՊԸ-ին, որը սակայն, չի կատարվել, որի հիմքով էլ խախտվել են Ընկերության իրավունքները և օրինական շահերը:

Հրավերի 8.1.2 կետը նույնպես պարունակում է վերը նշված որոշման իրակարգավորումները:

Տվյալ դեպքում, «Լոկատոր» ՓԲԸ-ն փաստում է այն, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն, անտեսելով Օրենքը, Կարգը և Ընթացակարգի հրավերը, կայացրել է որոշում, որը հակասում է Օրենքին, Կարգին և հրավերին, և որոնց արդյունքում խախտվել են Ընկերության իրավունքները և օրինական շահերը:

Անփոփելով վերը շարադրվածը՝ Ընկերությունը գտնում է, որ տվյալ դեպքում, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, «Բարվա» ՍՊԸ-ին ճանաչելով ընտրված մասնակից և առաջարկելով կնքել պայմանագիր, թույլ է տվել գնումները կարգավորող օրենսդրության պահանջների կոպիտ խախտում:

Ընկերությունը բողոքով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է չեղյալ հայտարարել «ՀՀ-ԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-01/17» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրությունը՝ «Բարվա» ՍՊԸ-ին ընթացակարգի ընտրված

մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին կամ հայտարարել «ՀՀ-ԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-01/17» ծածկագրով ընթացակարգն ապօրինի:

Խորհրդին ուղղված 08.08.2017թ. գրությամբ «Լոկատոր» ՓԲԸ-ն հայտնել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը «ՀՀ-ԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-01/17» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արձանագրությունները «Բարվա» ՍՊԸ-ին Ընթացակարգի հաղթող ճանաչելու և վերջինիս հետ պայմանագիր կնքելու մասին չի ստացել և այդ արձանագրությունները չեն հրապարակվել և, ըստ էության, Ընկերությունը տեղյակ չի եղել նաև այն մասին, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պայմանագիր կնքելու որոշմամբ անգործության ժամկետ չի սահմանել, և Ընկերությունը դրա մասին տեղեկացել է միայն 08.08.2017թ. կայացած Խորհրդի նիստի ժամանակ, ուստի Ընկերությունը Խորհրդին խնդրել է քննության առարկա դարձնել նաև այդ փաստը, քանի որ ըստ Ընկերության, Պատվիրատուի կողմից խախտվել է անգործության ժամկետ սահմանելու պահանջը, որը նախատեսված է եղել նաև Ընթացակարգի հրավերով:

«Լոկատոր» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 04.08.2017թ. ժամը 15:30-ի և 08.08.2017թ. ժամը 12:00-ի նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>«Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

«Բարվա» ՍՊԸ-ն 08.08.2017թ. ներկայացրել է միջնորդություն՝ ԳԲԽ-ԱՄ-2017/26 բողոքով որպես երրորդ կողմ ներգրավելու վերաբերյալ, նկատի ունենալով, որ Ընթացակարգի շրջանակներում «Բարվա» ՍՊԸ-ն ճանաչվել է հաղթող, ուստի շոշափվում են վերջինիս իրավունքները:

Խորհրդի 08.08.2017թ. միջանկյալ որոշմամբ «Բարվա» ՍՊԸ-ի՝ ԳԲԽ-ԱՄ-2017/26 բողոքի քննությանն որպես երրորդ կողմ ներգրավվելու վերաբերյալ միջորդությունը բավարարվել է:

«Բարվա» ՍՊԸ-ի ներկայացուցիչը Խորհրդի 08.08.2017թ. ժամը 12:00-ի նիստի ժամանակ առարկել է բողոքի դեմ, գտնելով, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն իրավաչափորեն է մերժել Ընկերության հայտը, ինչպես հայտնել է, որ ընթացակարգի արդյունքներով կնքվել է պայմանագիր, որն արդեն իսկ կատարվել է «Բարվա» ՍՊԸ-ի կողմից:

3. <u>ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ Արագածոտնի մարզպետարանը 03.08.2017թ. թիվ 04/9.1/2986-17 գրությամբ Խորհրդին ներկայացրել է «ՀՀ-ԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-01/17» ծածկագրով ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 04.08.2017թ. ժամը 15:30-ի և 08.08.2017թ. ժամը 12:00-ի նիստերի վերաբերյալ, 08.08.2017թ. ժամը 12:00-ի նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով առարկելով բողոքի դեմ, հայտնել է, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովն առաջնորդվել է «Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի հիման վրա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից կայացված թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/15 որոշման պահանջներով: Խորհրդի այն հարցին, թե արդյոք «Լոկատոր» ՓԲԸ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/15 որոշումը կայացվելուց հետո ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում առկա թերությունները շտկելու վերաբերյալ, թե ոչ, Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է, որ Ընկերությանը համապատասխան ծանուցում չի ուղարկվել: Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է նաև, որ «Բարվա» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու որոշմամբ չի սահմանվել ընթացակարգի արդյունքներով պայմանագիր կնքելու անգործության ժամկետ:

<u>4. ԳԲԽ-ԱՄ-2017/26 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-ԱՄ-2017/26 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կողմից ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կարիքների համար տեղակայումով հակակարկտային կայանների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ-ԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-01/17» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Լոկատոր» ՓԲԸ-ն և «Բարվա» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.04.2017թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ «Լոկատոր» ՓԲԸ-ն ճանաչվել է Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընկերության կողմից սահմանված ժամկետում ներկայացված փաստաթղթերը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են բավարար և 09.06.2017թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ «Լոկատոր» ՓԲԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից, որին սահմանված կարգով առաջարկվել է կնքել գնման պայմանագիր անգործության ժամկետի (10.06.2017թ.-14.06.2017թ. ներառյալ) ավարտից հետո:

4. «Բարվա» ՍՊԸ-ն 13.06.2017թ. բողոք է ներկայացրել ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին, որով վիճարկել է «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի՝ հրավերի պահանջներին համապատասխանելու փաստը և խնդրել է դադարեցնել «ՀՀ-ԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-01/17» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.06.2017թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ «Լոկատոր» ՓԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումը և «Բարվա» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից կամ չեղյալ հայտարարել «ՀՀ-ԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-01/17» ծածկագրով ընթացակարգը:

5. ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 13.07.2017թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/15 որոշմամբ մասնակի բավարարել է «Բարվա» ՍՊԸ-ի բողոքը՝ դադարեցնելով «ՀՀ-ԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-01/17» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.06.2017թ.

նիստի թիվ 4 արձանագրությամբ «Լոկատոր» ՓԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Վերոհիշյալ որոշմամբ Խորհուրդն արձանագրել է, որ «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չի ներկայացվել Ընթացակարգի հրավերի 3.1 կետի «գ» ենթակետով պահանջվող այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք մասնակիցը նախատեսում է օգտագործել:

Խորհուրդն արձանագրել է նաև, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Կարգի 51-րդ և Ընթացակարգի հրավերի 8.1.2 կետերով սահմանված պահանջներին համապատասխան չի առաջարկել Ընկերությանը նույն կետով սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

6. «ՀՀ-ԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-01/17» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 19.07.2017թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ, հաշվի առնելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի ԳԲԽ-ԷՍ-2017/15 որոշումը, չեղյալ է ճանաչել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագրությունը և առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Բարվա» ՍՊԸ-ին, որին ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.07.2017թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ «Բարվա» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից, որին առաջարկվել է կնքել համապատասխան գնման պայմանագիր:

8. Համաձայն www.gnumner.am համացանցային կայքում հրապարակված տեղեկատվության՝ «ՀՀ-ԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-01/17» ծածկագրով ընթացակարգի արդյունքներով ***«Բարվա» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու և անգործության ժամկետ սահմանելու վերաբերյալ հայտարարություն չի հրապարակվել և պայմանագիր կնքելու անգործության ժամկետ չի սահմանվել:***

9. www.gnumner.am համացանցային կայքում 31.07.2017թ. հրապարակվել է «ՀՀ-ԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-01/17» ծածկագրով ընթացակարգի արդյունքներով կնքված պայմանագրի

վերաբերյալ հայտարարություն, որի համաձայն՝ Պատվիրատուի և «Բարվա» ՍՊԸ-ի միջև 28.07.2017թ. կնքվել է համապատասխան գնման պայմանագիր:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Լոկատոր» ՓԲԸ-ի 01.08.2017թ. բողոքը, «ՀՀ-ԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-01/17» ծածկագրով ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության, 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի համաձայն՝

1. Բաց ընթացակարգի ձևով գնում կատարելու դեպքում, մինչև պայմանագիր կնքելը, պատվիրատուն հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:

2. Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

3. Անգործության ժամկետը գնումների բազային միավորի հիսնապատիկը գերազանցող գնումների դեպքում առնվազն 10 օրացուցային օր է, իսկ չգերազանցող գնումների դեպքում՝ առնվազն 5 օրացուցային օր:

5. Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կնքած պայմանագիրն առոչինչ է:

Օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին.

2) դատական կարգով բողոքարկելու գնումների բողոքարկման խորհրդի, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները:

Օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը կարող է ներկայացվել միայն սույն օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետը սահմանում է, որ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները

հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կողմից ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կարիքների համար տեղակայումով հակակարկտային կայանների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ-ԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-01/17» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Լոկատոր» ՓԲԸ-ն և «Բարվա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.04.2017թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ «Լոկատոր» ՓԲԸ-ն ճանաչվել է Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընկերության կողմից սահմանված ժամկետում ներկայացված փաստաթղթերը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են բավարար և 09.06.2017թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ «Լոկատոր» ՓԲԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից, որին սահմանված կարգով առաջարկվել է կնքել գնման պայմանագիր անգործության ժամկետի (10.06.2017թ.-14.06.2017թ. ներառյալ, հրապարակված է www.gnumner.am համացանցային կայքում) ավարտից հետո:

«Բարվա» ՍՊԸ-ն 13.06.2017թ. բողոք է ներկայացրել ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին, որով վիճարկել է «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի՝ հրավերի պահանջներին համապատասխանելու փաստը և խնդրել է դադարեցնել «ՀՀ-ԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-01/17» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.06.2017թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ «Լոկատոր» ՓԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումը և «Բարվա» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից կամ չեղյալ հայտարարել «ՀՀ-ԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-01/17» ծածկագրով ընթացակարգը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 13.07.2017թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/15 որոշմամբ մասնակի բավարարել է «Բարվա» ՍՊԸ-ի բողոքը՝ դադարեցնելով «ՀՀ-ԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-01/17» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.06.2017թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ «Լոկատոր» ՓԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Կարգի 51-րդ կետը սահմանում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընդ որում համաձայն Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Խորհրդի 13.07.2017թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/15 որոշմամբ արձանագրվել է, որ «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չի ներկայացվել Ընթացակարգի հրավերի 3.1 կետի «գ» ենթակետով պահանջվող այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք մասնակիցը նախատեսում է օգտագործել:

Ընդ որում Խորհուրդն արձանագրել է նաև, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Կարգի 51-րդ և Ընթացակարգի հրավերի 8.1.2 կետերով սահմանված պահանջներին համապատասխան չի առաջարկել Ընկերությանը նույն կետով սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Մինչդեռ Խորհուրդն արձանագրում է, որ «ՀՀ-ԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-01/17» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 19.07.2017թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ, հաշվի առնելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի ԳԲԽ-ԷՍ-2017/15 որոշումը, դադարեցրել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագրությունը և առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Բարվա» ՍՊԸ-ին, որին ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Մինչդեռ Կարգի 52-րդ կետի համաձայն՝ «Լոկատոր» ՓԲԸ-ին պետք է ծանուցվեր սահմանված ժամկետում արձանագրված թերությունը շտկելու վերաբերյալ և սահմանված ժամկետում Ընկերության կողմից անհամապատասխանությունը չշտկելու դեպքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը կարող էր մերժել Ընկերության հայտը:

Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է Կարգի 51-րդ և 52-րդ կետի պահանջները, քանի որ Խորհրդի 13.07.2017թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/15 որոշմամբ արձանագրվել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Կարգի 51-րդ կետի համաձայն չի առաջարկել Ընկերությանը սահմանված ժամկետում

շտկել արձանագրված անհամապատասխանությունը և Խորհրդի որոշումը կայացվելուց հետո, առանց Կարգի 51-րդ կետով նախատեսված՝ արձանագրված թերությունները մեկ աշխատանքային օրյա ժամկետում շտկելու վերաբերյալ ծանուցումը «Լոկատոր» ՓԲԸ-ին ուղարկելու, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 19.07.2017թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Բարվա» ՍՊԸ-ին, որին առաջարկվել է սահմանված ժամկետում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.07.2017թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ «Բարվա» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից, որին առաջարկվել է կնքել համապատասխան գնման պայմանագիր:

Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ բաց ընթացակարգի ձևով գնում կատարելու դեպքում, ***մինչև պայմանագիր կնքելը, պատվիրատուն հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:*** Այդ մասին կարող է հայտարարվել՝

1) արդյունքների ամփոփման նիստում՝ հանրային իրազեկման միջոցով, որին հրավիրվել են գնումների գործընթացի բոլոր մասնակիցները.

2) նման հայտարարությունը էլեկտրոնային ձևով կամ ֆաքսով կամ փոստով՝ պատվիրված նամակով, կարող է ուղարկվել գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին.

3) նման հայտարարությունը տեղադրվում է լիազորված մարմնի, իսկ հնարավորության դեպքում՝ նաև պատվիրատուի ինտերնետային կայքում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ: Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:***

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Բարվա» ՍՊԸ-ի հետ «ՀՀ-ԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-01/17» ծածկագրով ընթացակարգի արդյունքներով պայմանագիր կնքելու մասին Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.07.2017թ. թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշման մեջ չի ամրագրվել անգործության ժամկետի վերաբերյալ դրույթ, ընդ որում թե Պատվիրատուի ներկայացուցչի կողմից Խորհրդի նիստի ժամանակ արված հայտարարության և թե www.gnumner.am համացանցային կայքում առկա տեղեկատվության համաձայն՝ ***«ՀՀ-ԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-01/17» ծածկագրով ընթացակարգի արդյունքներով «Բարվա» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին հայտարարություն Օրենքով սահմանված կարգով չի հրապարակվել և անգործության ժամկետ չի սահմանվել Պատվիրատուի կողմից, այլ 31.07.2017թ. www.gnumner.am համացանցային կայքում հրապարակվել է «Բարվա» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրի մասին հայտարարություն:***

Այսպիսով՝ Խորհուրդն արձանագրում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ մասերով սահմանված պահանջները և առանց «ՀՀ-ԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-01/17» ծածկագրով ընթացակարգի արդյունքներով պայմանագիր կնքելու անգործության ժամկետ սահմանելու «Բարվա» ՍՊԸ-ի հետ կնքվել է գնման պայմանագիր, մինչդեռ նույն հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կնքած պայմանագիրն առոչինչ է:

Խորհուրդը գտնում է, որ «Բարվա» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշման մասին հայտարարությունը սահմանված կարգով չհրապարակելու և պայմանագիր կնքելու՝ Օրենքով նախատեսված անգործության ժամկետ չսահմանելու հետևանքով «Լոկատոր» ՓԲԸ-ն զրկվել է անգործության ժամանակահատվածում, նախքան պայմանագիր կնքելը, սահմանված կարգով ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդ բողոք ներկայացնելու հնարավորությունից:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, Խորհուրդը գտնում է, որ «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից 01.08.2017թ. ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ և 6-րդ կետերի համաձայն՝

Խորհուրդն իրավունք ունի ընդունել հետևյալ որոշումները

3) չեղյալ հայտարարելու կնքված պայմանագիրը՝

ա. եթե պատվիրատուն պայմանագիրը կնքել է առանց սույն օրենքի պահանջների համաձայն պայմանագրի մասին ծանուցում հրապարակելու,

բ. սույն օրենքի 9-րդ հոդվածի կամ 49-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները խախտելու դեպքում, եթե նման խախտումը զրկել է շահագրգիռ մասնակցին նախքան պայմանագրի կնքումն իրավական պաշտպանության միջոցների դիմելու հնարավորությունից, և եթե նման խախտումը համադրված է պետական գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության այլ պահանջների խախտման հետ, և եթե վերջին խախտումն ազդել է պայմանագիր կնքելու շահագրգիռ մասնակցի հնարավորությունների վրա.

6) հայտարարելու պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանագիրը կնքելուց հետո: Նման որոշումը հիմք է հանդիսանում դատական կարգով ներկայացվելիք վնասի փոխհատուցման հայցի համար.

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից 01.08.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքը բավարարել՝

1. հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետը՝ ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կողմից կազմակերպված «ՀՀ-ԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-01/17» ծածկագրով ընթացակարգը հայտարարել ապօրինի.

2. հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետի «ա» և «բ» ենթակետերը՝ չեղյալ հայտարարել ՀՀ Արագածոտնի մարզպետարանի և

«Բարվա» ՍՊԸ-ի միջև «ՀՀ-ԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-01/17» ծածկագրով ընթացակարգի արդյունքներով կնքված պայմանագիրը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**